Պրոլետարներ բոլոր երկրների միացե՛ք

ՀԿ(բ)Պ ԿԵՆՏԿՈՄԻ
ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԵՎ
ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԲԱԺԻՆ

Ագիտատորի
ԲԼՈԿՆՈՏ

№ 5 1949

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումը 1949 թվի մարտի 1-ից մասսայական սպառման ապրանքների պետական մանրածախ գների իջեցման մասին 1

Գյուղական ագիտատորների մարտական անելիքները 9

Ագիտատորի աշխատանքի փորձից

Վ. ՆՈՐՅԱՆ.— Ագիտատոր Ազատ Մանուկյանի աշխատանքի փորձից 18

Թ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.— Ինչպես եմ ես մասսայականացնում ՀԿ(բ)Պ 14-րդ համագումարի որոշումները 25

Օգնություն ագիտատորին

Դրուժբյունը Չինաստանում 32

Թեմա, պլան և գրականություն ագիտատորների զրույցների համար 45

Ինչ կարդալ 47

Նոր գրքեր 50

Խմբագրության հասցեն.— Երևան, Նալբանդյան 32, ՀԿ(բ)Պ Կենտկոմի Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին, հեռախոս՝ 2—52—78։

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԵՎ ՀԱՄԿ(Բ)Պ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1949 ԹՎԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆՐԱԾԱԽ ԳՆԵՐԻ ՆՈՐ ԻՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. 1947 թվի վերջում դրամական ռեֆորմ անցկացնելու և քարտային սիստեմը վերացնելու ժամանակ վերացվեցին ազատ առևտրի բարձր գները և մտցվեցին մասսայական սպառման ապրանքների միասնական իջեցված պետական մանրածախ գներ։ Դա մասսայական սպառման ապրանքների գների իջեցման առաջին էտապն էր։ Գների իջեցումը առաջին էտապում հանգեցրեց մասսայական սպառման ապրանքների էժանացմանը՝ պետական մանրածախ առևտրի գծով տարվա ընթացքում ոչ պակաս քան 57 միլիարդ ռուբլով։ Այդ գումարը զուտ վնաս էր

պետական բյուջեի համար, որը պետք էր ծածկել և հետագայում Կառավարության կողմից իրոք ծածկվեց աշխատանքի արտադրողականության աճման, մասսայական սպառման ապրանքների արտադրության վերելքի, արտադրանքի ինքնարժեքի իջեցման շնորհիվ։ Բայց դա միաժամանակ զուտ շահում էր բնակչության համար։

Սակայն գործը դրանով չէր կարող սահմանափակվել։ Պետական մանրածախ առևտրի գծով ապրանքների գների իջեցումը պետք է առաջ բերեր և իրոք առաջ բերեց գների նույնպիսի իջեցում կոլխոզային և կոոպերատիվ շուկայում։ Որովհետև տարվա ընթացքում բնակչության վաճառվող ապրանքների ընդհանուր մասսայի մեջ կոլխոզային և կոոպերատիվ ապրանքների բաժինը կազմում է մոտ 33 տոկոս, ապա դրա հետևանքով ստացվեց, որ կոլխոզային և կոոպերատիվ առևտրի ապրանքների գների իջեցումը այդ ապրանքների էժանացում տվեց ոչ պակաս քան 29 միլիարդ ռուբլով։

Հետևաբար, բնակչությունը մանրածախ առևտրի բոլոր հատվածների գծով մանրածախ գների իջեցումից տարվա ընթացքում շահեց ընդամենը մոտ 86 միլիարդ ռուբլի։

Այդ նշանակում է, որ գների իջեցման հե-

տևանքով առաջին էտապում զգալիորեն բարձրացավ ռուբլու գնողունակությունը, օտարերկրյա վալյուտաների կուրսի համեմատությամբ բարելավվեց ռուբլու կուրսը, լուրջ կերպով բարձրացավ բանվորների և ինտելիգենցիայի աշխատավարձը, զգալիորեն ցածրացան գյուղացիների ծախսերը արդյունաբերական ապրանքներ գնելու գծով։

2. 1948 թվի երկրորդ կեսում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության հետագա վերելքի, մասսայական սպառման ապրանքների արտադրության աճման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման ասպարեզում ձեռք բերված նորանոր նվաճումների կապակցությամբ հնարավորություն ստեղծվեց իրագործելու մասսայական սպառման ապրանքների գների նոր իջեցում։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմը որոշեցին իրագործել գների այդ նոր իջեցումը, որը մասամբ արդեն սկսվել էր 1948 թվին և այն ամբողջովին ավարտել 1949 թվի մարտի մեկին։ Դա կլինի մասսայական սպառման ապրանքների գների իջեցման երկրորդ էտապը։

Գների նոր իջեցումը այն չափով, ինչ չափով որ այն նշված է սույն որոշմամբ, կհանգեցնի մասսայական սպառման ապրանքների

րի նոր լրացուցիչ էժանացման մանրածախ առևտրի պետական հատվածի գծով տարեկան ոչ պակաս քան 48 միլիարդ ռուբլով։ Պետական բյուջեի այդ վնասը, որը միաժամանակ զուտ շահում է բնակչության համար, Կառավարության կողմից պետք է ծածկվի և, անտարակույս, կծածկվի տնտեսական մի շարք միջոցառումների օգնությամբ, չնայած այն լուրջ դժվարությունների, որոնք հարկ կլինի հաղթահարել։

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մանրածախ առևտրի պետական հատվածի գծով գների նոր իջեցումը առաջ կբերի անհապաղ և հիմնականում նույնպիսի գների իջեցում կոոպերատիվ ու կոլխոզային հատվածի գծով, ապա պետք է ընդունել, որ բնակչությունը կոլխոզային և կոոպերատիվ ապրանքների գների նոր իջեցումից լրացուցիչ կերպով կշահի ոչ պակաս քան 23 միլիարդ ռուբլի։

Հետևաբար, մանրածախ առևտրի բոլոր հատվածների գծով գների նոր իջեցումից ներկա երկրորդ էտապում, տարվա ընթացքում բնակչությունը կշահի ընդամենը մոտ 71 միլիարդ ռուբլի։

Այս նշանակում է, որ գների նոր իջեցման հետևանքով նորից զգալի չափով կբարձ-

րանա ռուբլու գնողունակությունը և կբարձրանա ռուբլու կուրսը արտասահմանյան վալյուտաների կուրսի համեմատությամբ, նորից լուրջ կերպով կբարձրանա բանվորների և ինտելիգենցիայի ռեալ աշխատավարձը և նորից զգալի չափով կցածրանան գյուղացիների ծախսերը արդյունաբերական ապրանքներ գնելու գծով։

ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմը որոշում են.

ա) 1949 թվի մարտի մեկից մասսայական սպառման ապրանքների պետական մանրածախ գներն իջեցնել միջին հաշվով հետևյալ չափերով.

Հաց և ալյուր՝ 10 %.
Կրուպա և մակարոններ՝ 10 %.
Հատիկային ֆուրաժ, քուսպ, թեփ, կոմբինացված կեր՝ 20 %.
Խոտ՝ 30 %.
Պեչենի, պրյանիկ և տորթ՝ 10 %.
Միս, երշիկեղեն և պահածոներ՝ 10 %
Ձուկ և ձկնեղեն՝ 10 %.
Կարագ և հալած յուղ՝ 10 %.
Պանիր և բրինձա պանիր՝ 20 %.
Աղ՝ 30 %.
Օղի՝ 28 %.
Լիկյոր-օղի ըմպելիքներ՝ 25 %.

խաղողի թունդ գինի, կոնյակ և մրգապտղային գինի՝ 15 %
Ծխախոտեղեն՝ 10 %.
Պարֆյումերիա՝ 20 %.
Վերարկու, կոստյում, շոր և բրդեղեն այլ պատրաստի հագուստներ՝ 12 %.
Մետաքսեղեն շոր, շապիկ, բաճկոն և այլ հագուստներ՝ 15 %.
Բրդեղեն գործվածքներ՝ 10 %.
Մետաքսեղեն գործվածքներ՝ 10 %.
Հագուստի անհատական պատվերը ատելյեում ու արհեստանոցներում՝ 20 %.
Թել՝ 15 %.
Մետաքսե գուլպա՝ 15 %.
Տեքստիլ և կոմբինացված կոշկեղեն՝ 15 %.
Գլխարկ (շլյապա և կեպի)՝ 15 %.
Տեքստիլ գալանտերեա՝ 15 %.
Ասեղնագործած իրեր՝ 15 %.
Մուշտակ՝ 10 %.
Մետաղեղեն գալանտերեա և կաշվի փոխանյութերից պատրաստված գալանտերեա՝ 10 %.
Պլաստ մասսայից և ցելյուլոիդից պատրաստված իրեր (ամանեղեն, կենցաղային իրեր և այլն)՝ 20 %.
Տնային գործածության մետաղյա իրեր

(դանակ, պատառաքաղ, գդալ և այլն) 10 %.
Տնային գործածության էլեկտրական ապրանքներ (էլեկտրական թեյաման, էլեկտրական պլիտա, էլեկտրական արդուկ և այլն)՝ 10 %.
Երկաթեղեն իրեր՝ 20 %:
Թամբագործական ապրանքներ՝ 20 %.
Ցեմենտ՝ 30 %.
Մոտոցիկլետ՝ 15 %.
Հեծանիվ՝ 20 %.
Ռադիոընդունիչ՝ 20 %.
Տելեվիզոր՝ 25 %.
Պիանինո, ակորդիոն, բայան և հարմոնիա՝ 20 %.
Պատեֆոն՝ 30 %.
Գրամաֆոնի և պատեֆոնի պլաստինկաներ՝ 20 %.
Ժամացույց՝ 30 %.
Ոսկերչական իրեր՝ 20 %
Գրամեքենա՝ 20 %.
Ֆոտո-ապարատ և հեռադիտակ՝ 10 %.

Գները համապատասխանորեն իջեցնել ռեստորաններում, ճաշարաններում, թեյարաններում և հասարակական սննդի մյուս ձեռնարկություններում.

բ) Հանձնարարել ՍՍՌՄ Առևտրի մինիստրությանը, սույն որոշմանը համապատասխան սահմանել սույն որոշման «ա» կետում թվարկված պարենային, ֆուրաժային և արդյունաբերական ապրանքների նոր իջեցված պետական մանրածախ գներ։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ
Ի. ՍՏԱԼԻՆ

ՀԱՄԿ(բ)Պ Կենտկոմի Քարտուղար
Գ. ՄԱԼԵՆԿՈՎ

28 փետրվարի 1949 թ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԳԻՏԱՏՈՐՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Օրերս տեղի ունեցավ ՀԿ(բ)Պ Կենտկոմի Զ-րդ պլենումը, որը քննության առավ կոլխոզները, ՄՏ կայանները և սովխոզները 1949 թվի գարնանացանին նախապատրաստելու ընթացքը, ինչպես նաև Հայկական ՍՍՌ կոլխոզներում և սովխոզներում մերձարևադարձային պտղաբուծությունը զարգացնելու միջոցառումները։ Կենտկոմի պլենումը, ելնելով ՀամԿ(բ)Պ Կենտկոմի Փետրվարյան պլենումի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի «Կոլխոզները, ՄՏ կայանները և սովխոզները գարնանացանին նախապատրաստելու մասին» որոշումներից, մարտական ծրագիր մշակեց մեր գյուղատնտեսության 1949 թվի զարգացման համար։ Պլենումի որոշումներում ընդգծված է, որ 1949 թվին սոցիալիստական գյուղատնտեսության գլխավոր խնդիրն է գյուղատնտեսական արտելի կազմակերպական-

տնտեսական հետագա ամրապնդումը և կոլխոզների հանրային սեփականության բազմապատկումը, իսկ հողագործության ասպարեզում պետք է ամեն կերպ բարձրացնել հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, ավելացնել տեխնիկական կուլտուրաների, հատկապես բամբակի, շաքարի ճակնդեղի, վուշի արտադրությունը, ինչպես նաև բազմամյա խոտաբույսերի սերմերի արտադրությունը։

Մեր շրջանային գյուղական կազմակերպությունները հսկայական աշխատանք պետք է կատարեն դաշտապաշտպան անտառաշերտեր տնկելու, խոտադաշտային ցանքաշրջանառություն կիրառելու, խաղողագործությունը և պտղաբուծությունը է՛լ ավելի զարգացնելու, լեռնային շրջանների գյուղատնտեսական արտադրության մեջ պտղատու կուլտուրաների միչուրինյան տեսակներ արմատավորելու և մերձարևադարձային պտղաբուծությունը լայնորեն զարգացնելու պլանը կենսագործելու համար։

Մեր պարտիական կազմակերպությունների, ագիտկոլեկտիվների և յուրաքանչյուր ագիտատորի խնդիրն է այդ որոշումները հասցնել յուրաքանչյուր կոլխոզ, բրիգադա, օղակ և ամեն մի կոլխոզնիկի ցույց տալ այդ

որոշումների կենսագործման վիթխարի նշանակությունը մեր երկրի զարգացման ու բարգավաճման գործում, մեր երկրում պարենամթերքների ու գյուղատնտեսական հումքի առատություն ստեղծելու գործում, կոլխոզնիկների նյութական ու կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման համար։

Դրա համար ամենից առաջ մեր ագիտատորների խնդիրն է՝ բոլոր կոլխոզնիկների գիտակցությանը հասցնել այն, որ 1949 թվի պլանները միանգամայն ռեալ պլաններ են և նրանց կատարումը մեր ուժերի ու հնարավորությունների սահմաններում է։ Այդ տեսակետից ագիտատորների աշխատանքի մեջ մեծ տեղ պետք է գրավի մեր անցյալ գյուղատնտեսական տարվա պլանների բոլոր գծերով կատարման ու գերակատարման ցուցադրումը։

1948 թվին խոշոր նվաճումներ ձեռք բերեց Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1940 թվի մակարդակը գերազանցեց 30 տոկոսով։ Ժամկետից շուտ, 1948 թվին ռեսպուբլիկայի կոլխոզները կատարեցին տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, ծխախոտի և շաքարի ճակնդեղի ցանքատարածությունն ընդարձակելու հնգամ-

յա պլանը։ Բանջարաբոստանային կուլտուրաների և կարտոֆիլի ցանքատարածությունը 1940 թվի համեմատությամբ համարյա կրկնապատկվեց, իսկ բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունն ավելացավ 60 տոկոսով, 1947 թվի համեմատությամբ զգալի հաջողություններ են ձեռք բերվել հացահատիկային կուլտուրաների, բամբակի, ծխախոտի, խաղողի բերքատվությունը բարձրացնելու գործում։

1948 թվին կոլխոզները կատարեցին անասնաբուծության զարգացման պետական պլանը։ Այս նվաճումները, որոնք արձանագրված են ՀԿ(բ)Պ Կենտկոմի 2-րդ պլենումի որոշման մեջ, յուրաքանչյուր կոլխոզնիկի սեփականությունը պետք է դառնան։

1948 թվին մեր գյուղատնտեսության մեջ ձեռք բերած հաջողությունների մասին հանրագումարային տեղեկություններ հաղորդելիս ամեն մի ագիտատոր տվյալ կոլխոզից, կոլխոզնիկների կյանքից վերցրած օրինակներով ու փաստերով պետք է ամրապնդի ու ավելի համոզեցուցիչ դարձնի իր ասածները։

Ագիտատորների առաջնահերթ խնդիրներից մեկը — դա գյուղատնտեսության առաջավորների՝ բարձր բերքի վարպետների, Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների

հարուստ փորձի լուրջ ուսումնասիրությունն ու այդ փորձի մասսայականացումն է, կոնկրետ փաստեր և օրինակներ վերցնելով ինչպես իրենց, այնպես էլ հարևան կոլխոզներից։

Ագիտատորները բարձր բերքի համար մղվող պայքարը կապելով կոլխոզները կազմակերպորեն ու տնտեսապես է՛լ ավելի ամրապնդելու և կոլխոզների հանրային սեփականությունը բազմապատկելու խնդրի հետ, միաժամանակ պետք է ցույց տան այդ գործում յուրաքանչյուր ազնիվ ու բարեխիղճ կոլխոզնիկի շահը։ Օրինակ, Կոտայքի շրջանի Նորգյուղի կոլխոզի օղակավարուհի Ռեդնիկ Հարությունյանի օղակը 1948 թվին յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով 21,14 ցենտներ բերք ստացավ, որի հետևանքով վարձատրության նոր կարգի համաձայն բարձրացավ օղակի աշխօրերի քանակը — օղակավարուհուն՝ 120 աշխօրով, օղակի անդամներ Ռոզա Խարայելյանին՝ 72 և Ծաղիկ Մկրտչյանին՝ 55 աշխօրով։ Գյուղատնտեսության առաջավորների փորձը մասսայականացնելիս ագիտկոլեկտիվների ղեկավարները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն ետ մնացող կոլխոզների, բրիգադաների, օղակների վրա, ուսումնա-

սիրելով նրանց հետ մնալու պատճառները, առաջավորների փորձի օրինակով օգնեն նրանց առաջ գնալու, դուրս գալու ճեղքվածքային վիճակից:

Ագիտատորները կոլխոզներում լայն կերպով պետք է կազմակերպեն սոցիալիստական մրցությունը: Հոկտեմբերյանի շրջանի Փոքր Շահրիար և Ղուզիգիդան գյուղերի կոլխոզներում այդ կոլխոզների պարտկազմակերպությունների ղեկավարությամբ ագիտատորները օգնում են կոլխոզնիկներին, բրիգադներին և օղակներին սոցիալիստական մրցությունը ծավալելու գործում և գործնականում իրենց սիստեմատիկ աշխատանքներով նպաստում են վերցրած պարտավորությունները կյանքում կենսագործելուն: Պատահական չէ, որ հիշյալ երկու կոլխոզներն էլ ապահովված են բոլոր տեսակի սերմերով, վերանորոգված են գյուղատնտեսական բոլոր գործիքներն ու մեքենաները, լավ վիճակի մեջ է գտնվում կենդանի քարշող ուժը: Կոլխոզները լրիվ չափով ապահովված են քիմիական պարարտանյութերով և կատարված են տեղական պարարտանյութի դաշտ տեղափոխման պլանները:

Ղուզիգիդանում ագիտատորներ Գ. Ավետիսյանը, Գ. Հարությունյանը, Ա. Պետրոս-

յանը, Փոքր Շահրիարում ագիտատորներ Մ. Վասիլյանը, Վ. Պարսեղյանը, Ա. Մեսրոպյանը և մյուսները ամեն օր կոլխոզնիկների հետ զրույց են անում ու թերթերի ընթերցանություն կազմակերպում՝ բացատրելով ՍՍՌՄ Մինիստրների Սովետի ու ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումները գարնանացանի աշխատանքների կազմակերպման ու 1949 թվի մարտի 1-ից մասսայական սպառման ապրանքների պետական մանրածախ գների նոր իջեցման մասին, որոնք ոգևորում են մեր կոլխոզնիկներին և աշխատանքային մեծ խանդավառություն առաջ բերում նրանց մեջ:

Մերձարևադարձային պտղաբուծությունը զարգացնելու միջոցառումների հարցը ՀԿ(բ)Պ Կենտկոմի 2-րդ պլենումը քննության առավ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1949 թվի փետրվարի 6-ի՝ «Հայկական ՍՍՌ կոլխոզներում և սովխոզներում մերձարևադարձային պտղաբուծությունը զարգացնելու միջոցառումների մասին» որոշման կապակցությամբ:

Ինչպես ՍՍՌՄ Մինիստրների Սովետը, նույնպես էլ ՀԿ(բ)Պ Կենտկոմի երկրորդ պլենումը իրենց որոշումներում նշեցին, որ մերձարևադարձային պտղաբուծության հա-

մար եղած նպաստավոր պայմանները մեզ
մոտ լրիվ կերպով չեն օգտագործվում։ Մեր
ռեսպուբլիկայի Նոյեմբերյանի, Իջևանի, Ա-
լավերդու, Շամշադինի շրջաններում, ինչպես
նաև Ղափանի, Գորիսի, Մեղրու, Սիսիանի,
Միկոյանի, Ազիզբեկովի, Կոտայքի և այլ
շրջանների միկրոշրջաններում հրաշալի պայ-
մաններ կան ձիթենի, նուռ, թուզ, ֆիստաշ-
կա, նուշ աճեցնելու համար։ 1950—1955
թվերի ընթացքում ռեսպուբլիկայում 10 հա-
զար հեկտար տարածության վրա մերձա-
րեվադարձային պտղատու ծառեր պետք է
տնկվեն։ Այդ կուլտուրաների տարածումը
խոշոր տնտեսական նշանակություն կարող
է ունենալ մեզ համար։ Ստացված արտա-
դրանքը վերամշակվելու է սննդի, ինչպես
նաև բժշկական և տեխնիկական նպատակ-
ներով օգտագործելու համար։

Այդ կարևոր միջոցառման կենսագործու-
մը ապահովելու նպատակով անհրաժեշտ է
հենց այս տարվանից ձեռնարկել պետա-
կան և կոլխոզային տնկարանային տնտե-
սությունների կազմակերպմանը՝ ռեսպուբլի-
կայի մերձարևադարձային պտղաբուծության
զարգացման շրջաններում։ Խոշոր աշխա-
տանք պետք է կատարել նաև մասնագիտա-
կան և մասսայական կադրերի պատրաստ-

ման գծով։ Այս տեսակետից հակայական խնդիրներ ու պարտականություններ են դըր-վում մեր համապատասխան շրջանների պարտիական, սովետական և տնտեսական կազմակերպությունների առաջ։ Այդ խնդիրներն ու պարտականությունները հավասարապես վերաբերում են նաև մեր ագիտատորներին։ Ագիտատորները, հենվելով սովետական առաջավոր ագրոբիոլոգիայի վրա, միչուրինյան ուսմունքի վրա, լայն ագիտացիա պետք է մղեն կոլխոզնիկների, կոլխոզնիկուհիների, սովխոզների աշխատողների մեջ, ցույց տալով մերձարևադարձային պտղաբուծության զարգացման հնարավորությունն ու հեռանկարները մեզ մոտ, այդ կուլտուրաների նշանակությունը մեր տնտեսության զարգացման համար. և հենց իրենց, կոլխոզնիկների համար։ 1949 թվի խընդիրների լավագույն կատարման շուրջը բոլշևիկյան ագիտացիայի կազմակերպումը մեր գյուղական ագիտատորների առաջնահերթ ու մարտական խնդիրն է։

446-52

ԱԳԻՏԱՏՈՐ ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԻՑ

Ազատ Մանուկյանը Ախուրյանի շրջանի Այգեբաց գյուղի լավագույն ագիտատորներից է։ Կոլխոզնիկները նրա կազմակերպած զրույցներին հաճախում են մեծ հետաքրքրությամբ, ակտիվորեն մասնակցում են զրույցին, արտահայտվում քննարկվող հարցի վերաբերյալ, անում իրենց դիտողություններն ու առաջարկությունները։ Դրա պատճառն այն է, որ ագիտատոր Մանուկյանը իր յուրաքանչյուր զրույցի համար ընտրում է տվյալ ժամանակի ամենահրատապ մեկ, կամ երկու հարց և խնամքով, բազմակողմանիորեն նախապատրաստվում զրույցին։ Ելնելով իր բազմամյա փորձից, Մանուկյանը լավ գիտի, որ որքան էլ հետաքրքիր ու առօրյա լինի քննարկվող թեման, նրա շուրջը կազմակերպված զրույցը աշխույժ չի անցնի և հարկ եղած արդյունքը չի տա, եթե զրույցի ժամանակ չխոսվի տեղական, կոլխոզնիկներին ծանոթ հարցերի մասին։ Եվ մեծ փորձի տեր ագիտատորը յուրաքանչյուր անգամ

կարողանում է իր զրույցների ժամանակ օգտագործել իրենց կոլխոզի կյանքից վերցրած փաստերը։

Բերենք մի քանի օրինակներ։

Փետրվարի 11-ի իր զրույցի համար Մանուկյանը ընտրել էր այն հարցը, թե գյուղատնտեսության բերքատվության բարձրացման գործում ինչպիսի մեծ նշանակություն ունեն դաշտապաշտպան անտառաշերտերը։ Նա իր զրույցն սկսեց այսպես.

— Ռուս մեծ գիտնականներ Դոկուչաևը, Վիլյամսը, Միչուրինը իրենց ստեղծած գիտությամբ մեզ սովորեցնում են, որ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման, կայուն բերք ստանալու համար անհրաժեշտ է ստեղծել և կիրառել ագրոնոմիական միջոցառումների լրիվ կոմպլեքս, այսինքն՝ պետք է ստեղծել դաշտապաշտպան անտառաշերտեր, ջրային տեղական ռեսուրսների հիման վրա պատրաստել լճակներ, ջրամբարներ, կատարել խոտադաշտային ճիշտ ցանքաշրջանառություն և այլն։

Փորձով հաստատված է, որ անտառաշերտերը դաշտը պաշտպանում են ամռան չոր, տաք և ուժեղ շարժվող օդի հոսանքների՝ քամիների ազդեցությունից, կտրում են ե-

րաշտ առաջացնող այդ քամիների թափը և
վերջնականապես թուլացնում նրանց: Բացի
այդ, ծառաբույսերն իրենց տերևներով գո-
լորշիացնում են հողի խորը շերտերում
եղած առատ ջրպաշարից մեծ քանակու-
թյամբ ջուր և այդպիսով խոնավացնում օդը:
Իսկ ձմռանը անտառաշերտերը դաշտում
կուտակված են պահում ձյունը:
Մեր Միության շատ առաջավոր շրջաննե-
րում, որտեղ լրիվ իրացված է խոտադաշ-
տային ցանքաշրջանառությունը, ստեղծված
են դաշտապաշտպան անտառաշերտեր, շեշ-
տակի կերպով բարձրացել է հացահատիկա-
յին կուլտուրների բերքատվությունը: Այս-
պես, Ռոստովի մարզի Սալսկի շրջանի կոլ-
խոզներում, որտեղ անց է կացված խոտա-
դաշտային ճիշտ ցանքաշրջանառություն և
ստեղծված են անտառաշերտեր, 1946 թվի
ուժեղ երաշտի պայմաններում անգամ հեկ-
տարից ստացվեց 16—18 ցենտներ հացահա-
տիկի բերք: Իսկ հարևան կոլխոզներում,
ուր չէր անցկացված խոտադաշտային ցան-
քաշրջանառություն և չկային անտառաշեր-
տեր, 2—3 անգամ պակաս բերք ստացվեց:
Անտառաշերտերի ունեցած խոշոր նշանա-
կության մասին օրինակներ կարելի է բերել
նաև մեր շրջանից: Մեր, Ախուրյանի շրջանի

ճակնդեղի զոնալ կայանի գիտական աշխա-
տող ընկեր Սուքիասյանի ուսումնասիրու-
թյունները ցույց են տալիս, որ շրջանի այն
կոլխոզներում, ուր հացահատիկի, կամ ճա-
կրնդեղի ցանքը պաշտպանվում է ծառա-
տունկերով, այնտեղ բերքն զգալի չափով
բարձր է ստացվում: Այսպես, օրինակ, Հա-
ցիկ գյուղի կոլխոզի այգեգործական օղակը,
որի օղակավարն է Սիմոն Մանուկյանը,
1948 թվին այգու միջշարքային տարածու-
թյուններում կատարեց 7 հեկտար շաքարի
ճակնդեղի, 1,3 հեկտար կարտոֆիլի և 3
հեկտար բանջարանոցային կուլտուրաների
ցանք: Չնայած անցյալ տարվա կլիմայական
անբարենպաստ պայմաններին, Մանուկյանի
օղակն իր մշակած այդ հողամասից 2 ան-
գամ ավելի բերք ստացավ, քան ստացվեց
բաց դաշտերում կատարված ցանքսից:
Ելնելով այս բոլորից,— ասում է ագիտա-
տորը,— վստահ կերպով կարելի է ասել, որ
հենց միայն դաշտապաշտպան անտառաշեր-
տերի ստեղծումով մեր շրջանի կոլխոզները,
այդ թվում և մեր կոլխոզը, մեծ չափով
կբարձրացնեն իրենց դաշտերի բերքատվու-
թյունը:
Ագիտատորը մի պահ լռում է. կոլխոզ-
նիկ Արիստակես Ռսկանյանը հարցնում է.

— Իսկ ի՞նչն է խանգարում մեզ անտառաշերտեր տնկելու. թող կոլխոզը որոշի, կտնկենք:

— Ճիշտ ես, ընկեր Ոսկանյան,— պատասխանում է ագիտատորը,— մեզ ոչ մի բան չի խանգարի անտառաշերտեր ստեղծելու համար: Ձեզ պետք է հայտնեմ, որ մեր ռեսպուբլիկայի Կառավարության որոշմամբ 1949-ից մինչև 1952 թվականը մեր շրջանի կոլխոզային դաշտերում ստեղծվելու են 500 հեկտար դաշտապաշտպան անտառաշերտեր: Շրջանային Սովետի գործկոմի որոշմամբ այս տարվանից սկսվելու է անտառաշերտերի տնկումը: Մեր կոլխոզի վարչությունը արդեն ակտու՛լ առանձնացրել է հողամաս, որի վրա տնկվելու է դաշտապաշտպան անտառաշերտը:

Ագիտատորի այս վերջին հայտարարությունը մեծ աշխուժացում է առաջ բերում կոլխոզնիկների մեջ. նրանք սկսում են խոսել այն մասին, թե որքան հարմար է այդ հողամասը անտառաշերտի համար, ինչպես և ինչպիսի ծառեր պետք է տնկել, որ լավ աճեն և այլն:

Ագիտատոր Ա. Մանուկյանի աշխատա[ն]քից բերենք մի օրինակ ևս:

Վերջին մի քանի զրույցների ընթացք
նա իր թաղամասի կոլխոզնիկների մեջ մա
սայականացնում էր «Կոլխոզները, ՄՏ Կ
յանները և սովխոզները գարնանացանի
նախապատրաստելու ընթացքի մասին» ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումը:

— Դաշտում ձյունը կուտակելու վերաբերյալ մեր կառավարության և պարտիայի պահանջը լավագույն կերպով են կիրառում օղակավարներ Արմենակ Կիրոյանի, Արտո Սուլթանյանի, Արիստակես Ոսկանյանի օղակները,— ասում է նա: Այդ օղակները 2—3 օրում ձյուն են կուտակել 25—30 հեկտարի վրա, իրենց առաջադրանքները կատարելով 150—200 տոկոսով: Գարնանացանին լավ են նախապատրաստվում նաև մեր կոլխոզի անասնապահները: Նրանցից՝ Թևլո Կուրղինյանը, Լևոն Ղավազյանը և արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձած Մանուկ Դումանյանը իրենց հանձնված անասուններին լողացրել են 4 անգամ, եզները գեր են և առույգ: Իսկ դուք, ընկեր Սարգիս Կարապետյան և Աբգար Բեգչանյան, դեռ միայն երկու անգամ եք լողացրել ձեր անասուններին, լավ չեք խնամում, դրա համար էլ նրանք նիհար են:

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշման մասսայականացումից հետո ագիտատոր Ա. Մանուկյանը կոլխոզի 4-րդ և 5-րդ բրիգադաների կոլխոզնիկներին խորհուրդ տվեց սոցիալիստական մրցության մեջ մտնել գարնանացանը սեղմ ժամկետներում և բարձր որակով կատարելու համար։ Բրիգադաները համաձայնվեցին և ագիտատորի օգնությամբ կնքեցին սոցիալիստական մրցության պայմանագիր։ Չորրորդ բրիգադան պարտավորություն վերցրեց այս տարվա գարնանացանը կատարել 3 աշխատանքային օրում, մինչև մարտի 20-ը ավարտել դաշտերի պարարտացումը, 2 հեկտար խոպան հողամաս դարձնել վարելահող, 20 հեկտար ցանք ոռոգել ձնհալից և անձրևներից գոյացած ջրերով։ Բրիգադան պարտավորվեց իր հացահատիկային կուլտուրաների ցանքադաշտերի յուրաքանչյուր հեկտարից ստանալ 16,3 ցենտներ միջին բերք, պլանով տրված 14,8 ցենտների փոխարեն։

Նույնպիսի բարձր պարտավորություններ է վերցրել նաև 5-րդ բրիգադան։ Երկու բրիգադաներում էլ եռում աշխատանք է ծավալված վերցրած պարտավորությունները պատվով կատարելու համար։ Վ. ՆՈՐՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՀԿ(Բ)Պ 14-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Չորրորդ տարին է, ինչ ես Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության սկզբնական պարտկազմակերպության հանձնարարությամբ ագիտացիոն - մասսայական աշխատանք եմ տանում տնտեսուհիների մեջ։ Այժմ ես պարապում եմ Երևանի Ջափարիձեի փողոցի № 10 և 12 տների տնտեսուհիների հետ։ Իմ ունկնդիրները տարբեր տարիք ունեն. կան և ծերեր, և՛ միջին տարիքի և՛ երիտասարդ կանայք. բայց այս ինձ չի խանգարում, որպեսզի ես կարողանամ պարապմունքն անցկացնել այնպես, որ այն հասկանալի, հետաքրքիր ու մատչելի լինի բոլոր ունկնդիրների համար։ Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես ագիտատորը կկազմակերպի և կանցկացնի տարբեր թեմաների վերաբերյալ իր պարապմունքները։

Պարզ բան է, եթե ագիտատորն իր պարապմունքներն անցկացնի միայն մեր պարտիայի և կառավարության որոշումների ընթերցմամբ, կամ ընդհանուր խոսքերով երկար զեկուցումներ կարդա, ապա որքան էլ որ կարևոր լինեն այդ որոշումները, միևնույն է տնային տնտեսուհին չի կարողանա ըմբռնել նրանց իմաստն ու նշանակությունը։ Անհրաժեշտ է, որպեսզի տնային տնտեսուհիներին այդ որոշումները բացատրվեն նրանց համար մատչելի լեզվով, կյանքից վերցրած կոնկրետ օրինակներով ու փաստերով։ Այդ բանը ագիտատորը հնարավորություն ունի անելու, քանի որ մեր պարտիայի և կառավարության բոլոր որոշումները բխում են հենց մեր կյանքից, ցույց են տալիս ինչպես արդեն ձեռք բերած նվաճումները, այնպես և մեր նոր կյանքի կառուցման հեռանկարները։ Ագիտատորին մնում է միայն, ինչպես ասում են, բաց անել փակագծերը և իր ունկնդիրներին ծանոթ օրինակներով պարզաբանել այդ որոշումները։

Որպես օրինակ վերցնենք ՀԿ(բ)Պ 14-րդ համագումարի որոշումների մասսայականացումը։ ՀԿ(բ)Պ Կենտկոմի աշխատանքի մասին ընկ. Գր. Հարությունյանի հաշվետու զեկուցման առթիվ 14-րդ համագումարի ըն-

դունած բանաձևը, որտեղ նշված են ինչպես հաշվետու շրջանում ռեսպուբլիկայի ձեռք բերած նվաճումները, այնպես և հետագա անելիքները, նույնպես գրված է սեղմ, որոշման լեզվով։ Բայց տնտեսուհիների մեջ ագիտացիոն-մասսայական աշխատանք տանելու ինչպիսի՜ հսկայական, հետաքրքիր նյութ է պարունակում այդ բանաձևը։ Եվ իմ անձնական փորձից ելնելով ես կարող եմ ասել, որ 14-րդ համագումարի այդ որոշումները բուռն հետաքրքրությամբ են լսում տնային տնտեսուհիները։ Համագումարի բանաձևը ես մասսայականացնում եմ ոչ թե ընդհանուր առմամբ խոսելով, թե ինչ որոշեց համագումարը, այլ կետ առ կետ կարդալով, կյանքից վերցրած կոնկրետ օրինակներով այն բացատրում եմ ունկնդիրներին։

Այսպես, օրինակ, ՀԿ(բ)Պ 14-րդ համագումարի վերոհիշյալ բանաձևի 2-րդ կետում խոսվում է մեր ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման հիմքը հանդիսացող էլեկտրաարդյունաբերության զարգացման մասին։ Այս կետը բացատրելիս, ես նախ և առաջ մի փոքր ծանոթացում տվի, որ արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ է վառելանյութ ունենալ, իսկ մեր ռեսպուբլիկան վառելանյութի այդպիսի բր-

նական պաշարներ համարյա թե չունի, իսկ
դրսից բերելը շատ թանկ կնստի։ Բայց դրա
փոխարեն ռեսպուբլիկան ունի էներգիայի մի
անսպառ աղբյուր՝ Սևանա լճի ջրերը, որոնք
դարերով անօգտագործելի մնացել են լեռ-
ների մեջ։ Եվ ապա բացատրեցի, որ սովե-
տական կառավարությունը որոշել է այդ
ջրերի ուժը օգտագործել էլեկտրական էներ-
գիա ստանալու համար, որի համար էլ Զան-
գու գետի վրա կառուցվելու են մի շարք
էլեկտրակայաններ և որ նրանցից երեքի տը-
ված էներգիան մենք արդեն օգտագործում
ենք։ Ապա պատմեցի նորակառույց հիդրո-
կայանների՝ Սևանի Վճային կայանի և Գյու-
մուշգէսի մասին։ Աստիճանաբար այս խոշոր
հարցի վերաբերյալ զրույցը ես մոտեցրի առ-
օրյա կյանքին և օրինակներ բերի, թե ինչ
կտա յուրաքանչյուր աշխատավորի մեր նո-
րակառույցների արտադրած էլեկտրական է-
ժան էներգիան։ Զրույցի այս մասում տնտե-
սուհիներն սկսեցին ինձ բազմաթիվ հարցեր
տալ։

Բայց տնային տնտեսուհիները ոչ միայն իրենց անմիջական առօրյայի վերաբերյալ հարցեր էին տալիս, այլև հետաքրքրվում էին պետական խոշոր նշանակություն ունեցող հարցերով։ Այսպես, օրինակ, Նաթեր

Արևշատյանը անհանգստացած հարցրեց.
«Հապա ափսոս չի՞ Սևանա լիճը, որ չորացնում են»։ Ես պատասխանեցի, որ այն ոչ թե չորացնում են, այլ 50 տարվա ընթացքում կփոքրանա նրա մակերեսը և փոքր մակերեսի Սևանը կմնա որպես մշտական էներգիայի աղբյուր՝ ռեսպուբլիկայի համար։

Իսկ Ցոլիկ Կարապետյանը հարցրեց, թե իսկ ի՞նչ են լինելու հիդրոէլեկտրակայանների օգտագործած ջրերը։ Երբ ես բացատրեցի, որ այդ ջրերը կոռոգեն ռեսպուբլիկայի անջրդի հողերը, ապա ունկնդիրները մեծ գոհունակությամբ արտահայտվեցին պարտիայի համագումարի այդ որոշման վերաբերյալ։

Կամ թե վերցնենք պարտիայի 14-րդ համագումարի որոշումներից այնպիսի բնագավառ, ինչպիսին է գիտության բնագավառը։ Առաջին հայացքից թվում է, թե տնային տնտեսուհիները շատ հեռու են կանգնած այդ բնագավառից։ Բայց իրականության մեջ այդ այդպես չէ։ Ահա մի օրինակ։ Համագումարի բանաձևի 20-րդ կետում ասված է.

«Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 14-րդ համագումարը հանձնարարում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային, գիտահետազոտա-

կան ինստիտուտներին և սելեկցիոն կայան-ներին՝ մինչև վերջը վերակառուցել իրենց աշխատանքը Վիլյամսի—Միչուրինի—Լիսեն-կոյի սովետական առաջավոր ագրոբիոլո-գիական գիտության հիման վրա՝ ռեսպուբլի-կայի գյուղատնտեսության առաջ դրված հրատապ խնդիրները լուծելու համար»։

Պարզ է, եթե բանաձևի այս կետը ես այս-պես կարդայի և անցնեի, իմ ունկնդիրները դժվար թե հասկանային նրա ամբողջ էու-թյունը։ Ես այն բացատրեցի այսպես. նախ ունկնդիրներին ծանոթացրի, թե ովքեր են գիտնականներ՝ Վիլյամսը, Միչուրինը, Լի-սենկոն, կոնկրետ օրինակներ բերի նրանց կատարած աշխատանքներից և ապա պատ-մեցի, թե ինչպես նրանց ստեղծած գիտու-թյան հիման վրա մեր ռեսպուբլիկայում տա-րածվում են գյուղատնտեսական նոր թանկ-արժեք կուլտուրաներ և հատկապես այնպի-սի շրջաններում, ուր նախկինում անհնարին էր համարվում այդ բույսերի աճումը։ Իմ այս պարապմունքը զուգադիպեց այն բանին, որ Հայաստանում սովետական կարգերի հաս-տատման 28-րդ տարեդարձի առթիվ Երևա-նում կազմակերպվեց ռեսպուբլիկայի նվա-ճումները ցույց տվող ցուցահանդես։ Ես իմ խմբակի անդամներին էքսկուրսիա տարա

այդ ցուցահանդեսը և ցույց տվի գյուղա-տնտեսական կուլտուրաների այն նոր տե-սակները, որոնք մեր կոլխոզներն ստացել են առաջնորդվելով միչուրինյան առաջավոր բիոլոգիայի ուսմունքով։

Համագումարի որոշումները մասսայակա-նացնելիս իմ ունկնդիրների ինձ տված բազ-մաթիվ հարցերի պատասխանը ես տվի ցու-ցահանդեսում։ Այնտեղ նրանք տեսան, թե հետպատերազմյան ժամանակաշրջանում մեր ռեսպուբլիկայի արդյունաբերությունն ինչպիսի բազմապիսի բարձրորակ ապրանք-ներ է արտադրում և ցուցադրված դիագրա-մաներից ու թվերից պարզ պատկերացրին, թե ինչպիսի խոշոր չափերի կհասնի այդ ապրանքների արտադրությունը ստալինյան նոր հնգամյակի կատարմամբ։

Բ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

(Տեղեկանք)

Չինաստանում տիրող ժամանակակից դրությունը բնութագրվում է ներքին ռեակցիայի և նրա ամերիկյան ոգեշնչողների դեմ չին ժողովրդի տարած նոր, խոշոր հաղթանակներով։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Չինաստանի դեմոկրատական ուժերը ռեակցիայի դեմ իրենց ազգային-ազատագրական շարժումն սկսեցին դեռևս 1931 թվին, պատերազմ մղելով ճապոնական իմպերիալիզմի դեմ այն ժամանակ, երբ գոմինդանական ռեակցիան համաձայնություն էր փնտրում նրանց հետ։ Գոմինդանական ռեակցիան, 1933 թվին ճապոնացիների հետ հաշտություն կնքելով, իր ամբողջ ուժերը ուղղեց ժողովրդա-ազատագրական շարժման և նրա պանծալի, հերոսական բանակի դեմ, որոնք ազատագրել ու իրենց ձեռքն էին պահում երկրի մի շարք շրջանները։

1946 թվի հուլիսին, գոմինդանի ռեակցիոն ղեկավարությունն, ամերիկյան իմպերիալիստների օգնությամբ, մերժելով չինական կոմունիստական պարտիայի և մյուս դեմոկրատական կազմակերպություն-

ների՝ Չինաստանի հետպատերազմյան վերակառուցման հարցերի խաղաղ ճանապարհով լուծելու վերաբերյալ առաջարկությունը, զինված հարձակում ձեռնարկեց երկրի ազատագրական դեմոկրատական շրջանների դեմ, շրջաններ, որոնք ստեղծվել էին չինական ժողովրդի հերոսական ուժերով, ճապոնական զավթիչների դեմ մղված պայքարի ընթացքում։ Գոմինդանականներն այն ժամանակ հարձակման մեջ նետեցին չորս միլիոնանոց բանակ, որը լի ու լի մատակարարված էր ամերիկյան սպառազինությամբ և հանդերձանքով և իր կազմում ուներ ամերիկյան զինվորական խորհրդատուներ։ Իսկ ժողովրդա-ազատագրական բանակի զորքերի թիվն այն ժամանակ մեկ միլիոն 200 հազար զինվորից չէր անցնում և նրանք թույլ էին զինված։

Չնայած ուժերի այսպիսի անհավասարության, չինական ռեակցիայի հարձակումը լրիվ ձախողման ենթարկվեց։ Հենվելով ժողովրդական ամենալայն մասսաների վրա, ժողովրդա-ազատագրական զորքերը, չինական կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, հետ մղեցին գոմինդանական զորքերի հարձակումները և ստիպեցին նրանց 1947 թվի կեսերին ճակատի մեծ մասում անցնել պաշտպանության։ Մեկ տարվա մարտերի ընթացքում գոմինդանականները կորցրեցին ավելի քան մեկ միլիոն 200 հազար սպանված, վիրավոր և գերի։

Այն ժամանակ, երբ գոմինդանական բանակի ու-

ժերը նվազում էին», ժողովրդա-ազատագրական զորքերի ուժերը գնալով անընդհատ աճում էին։ Հարյուրհազարավոր չին հայրենասերներ մտնում էին նրա շարքերը։ Նրանց սպառազինումն զգալիորեն բարելավվեց շնորհիվ ազատագրված շրջանների արդյունաբերության և ի հաշիվ կռվի ընթացքում վերցված հարուստ ռազմավարի։

1947 թվի աշնանը ժողովրդա-ազատագրական զորքերը պաշտպանությունից անցան հակահարձակման և իրենց ձեռքը վերցրին նախաձեռնությունը։ Հարձակողական հաջող գործողությունների հետևանքով 1947 թվի օգոստոս ամսից մինչև 1948 թվի հուլիսը ժողովրդա-ազատագրական բանակը գոմինդանականներից ազատագրեց համարյա ամբողջ Մանջուրիան և Արևելյան Չինաստանի տերիտորիայի մեծ մասը՝ Յանցզի գետից հյուսիս։ Հարավային Չինաստանում ժողովրդա-ազատագրական զորքերը պաշտպանում էին գոմինդանականների հարձակումներից ազատագրված պարտիզանական շրջանները։ 1948 թվի օգոստոսի 1-ին ազատագրված շրջաններն արդեն զբաղեցնում էին 2 միլիոն 355 հազար քառակուսի կիլոմետր տարածություն (ամբողջ երկրի տերիտորիայի 24,5 տոկոսը) ավելի քան 168 միլիոն ազգաբնակչությամբ, կամ թե Չինաստանի ազգաբնակչության մոտ 37 տոկոսը։

Սակայն գոմինդանականների ձեռքում դեռ մնում էին այդ շրջանների բնակելի և արդյունաբերական

խոշոր կենտրոնները։ Գոմինդանական հրամանատարության (և նրա ամերիկյան խորհրդատուների) նոր ստրատեգիական պլանը կայանում էր նրանում, որպեսզի իր ձեռքում պահի այդ քաղաքները և Հյուսիսային Չինաստանի ստրատեգիական պլացդարմները Մանջուրիայում։ Գոմինդանական հրամանատարությունը ենթադրում էր, քանի որ հիշված շրջաններում կենտրոնացված է գոմինդանական բոլոր զինված ուժերի կեսից ավելին՝ մինչև 2 միլիոն մարդ, ապա ժողովրդա-ազատագրական բանակները չեն համարձակվի մոտիկ ժամանակներս նրանց դեմ ձեռնարկելու լայն հարձակումներ. այսպիսով, դադար առնելով, գոմինդանական զորքերը կկարողանան իրենց կարգի բերել նոր հարձակման անցնելու համար։

Բայց գոմինդանական հրամանատարության հույսերը չարդարացան։ Նրա նոր ստրատեգիական պլանը խորտակվեց այնպես, ինչպես և նախորդները։ Գոմինդանական բզկտված զորքերին ժամանակ չտալով հանգստի համար, ժողովրդա-ազատագրական զորքերը 1948 թվի սեպտեմբերին, Չինաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի նախագահ / Մաո-Ցզե-դունի և ժողովրդա-ազատագրական բանակների գլխավոր հրամանատար Չու Դեի ղեկավարությամբ նոր հարձակում սկսեցին, որի ընթացքում մի շարք խորտակիչ հարվածներ հասցրին գոմինդանական զորքերին։

Աշնանային մարտերը բնորոշ էին նաև նրանով, որ հաճախակի էր դարձել գոմինդանական զորքերի ամբողջ միավորումների՝ ժողովրդա-ազատագրական զորքերի կողմն անցնելը։ Շնորհիվ կամավորների անընդհատ հոսանքի, ժողովրդա-ազատագրական զորքերի շարքերը շարունակ աճում են. նրանց կանոնավոր զորքերի թիվն արդեն անցնում է երեք միլիոնից, այն ժամանակ, երբ գոմինդանական զորքերի թիվը արդեն 1948 թվի հոկտեմբերին նվազել էր և հասել 2 միլիոն 900 հազար մարդու և գնալով ավելի ու ավելի է կրճատվում։

Ժողովրդա-Ազատագրական բանակի սպառազինությունը, հարուստ ռազմավարի գրավման հետևանքով, շեշտակի կերպով լավացել է։ Ամերիկյան մամուլը և ԱՄՆ-ի առանձին ներկայացուցիչներն ստիպված են խոստովանել, որ 1944-1948 թվերին գոմինդանական զորքերին տրված ամերիկյան սպառազինության կեսից ավելին այժմ գտնվում է ժողովրդա-ազատագրական բանակի ձեռքում։ Մամուլի տեղեկություններով չինական ռեակցիային ԱՄՆ-ի տված այդ օգնությունը կազմում է մոտավորապես վեց միլիարդ դոլլար։

Վերջին ամիսների ընթացքում Չինաստանի ժողովրդական բանակը, գոմինդանական ռեակցիայի և ամերիկյան էքսպանսիոնիստների դեմ մղվող պատերազմում փայլուն հաջողությունների է հասել։ Գոմինդանականները դուրս են վռնդված Մանջուրիայից։

Ժողովրդա-ազատագրական բանակը գրավել է Հյուսիսային և Կենտրոնական Չինաստանի ստրատեգիական կարևոր կետեր՝ Ցզինան, Կայֆին, Բաոդին, Չժենչժոու, Սույչժոու, Բենպու քաղաքները։ Ազատագրված է Հյուսիսային Չինաստանի խոշորագույն տնտեսական կենտրոն Տյանցզինը և Չինաստանի նախկին մայրաքաղաք Բեյպինը։ Այժմ ժողովրդա-ազատագրական բանակի զորամասերն առաջ շարժվելով Տյանցզին-Պուկոուսկյան երկաթուղու երկարությամբ, կենտրոնանում են Յանցզի գետի հյուսիսային ափին, Նանկինի, Խանկոուի և Շանհայի նախամատույցներում։ Ազատագրված քաղաքների բնակչությունը ժողովրդա-ազատագրական բանակի զորքերին հանդիսավոր կերպով է դիմավորում։

Չինաստանի ժողովրդա-ազատագրական բանակի գլխավոր շտաբի վերջերս հրապարակված կոմյունիկեյում ասված է, որ երկու ու կես տարվա պատերազմական գործողությունների ընթացքում գոմինդանական զորքերի կորուստները կազմել են 4,5 միլիոն մարդ, որոնցից 71 տոկոսը կազմում են կանոնավոր բանակի զորքերը։ Այդ նույն ժամանակում գերի է վերցվել գոմինդանական կանոնավոր զորքերի ավելի քան 2 միլիոն 693 հազար զինվոր ու սպա։ Պատերազմական գործողությունների երկու ու կես տարվա ընթացքում սպանվել, գերի է վերցվել, կամ գերի է հանձնվել դիվիզիայի հրամանատարի և ավելի բարձր աստիճան ունեցող գոմինդանական 869

գեներալ։ Այդ նույն ժամանակաշրջանում ժողովրդա-ազատագրական բանակն ազատագրել է մոտ 300 հազար քառակուսի կիլոմետր տարածություն՝ մոտ 55 միլիոն բնակչությամբ։ Այսպիսով ազատագրված շրջանների տերիտորիան հասել է 2 միլիոն 580 հազար քառակուսի կիլոմետրի, իսկ բնակչության թիվը 190 միլիոնից անցել է։ Երկու ու կես տարվա ընթացքում ժողովրդա-ազատագրական բանակն ազատագրել է 270 քաղաք և գավառական կենտրոն։ Այդպիսով ժողովրդա-ազատագրական բանակն ընդհանուր առմամբ ազատագրել է 737 քաղաք և գավառական կենտրոն։

Պատերազմական գործողությունների երկու ու կես տարվա ընթացքում ժողովրդա-ազատագրական բանակը գրավել է ավելի քան մեկ միլիոն 480 հազար հրացան և ատրճանակ, ավելի քան 170 հազար գնդացիր, ավելի քան 30 հազար հրանոթ, ավելի քան 2 միլիոն 280 հազար արկ, ավելի քան 226 միլիոն փամփուշտ, ավելի քան 1 միլիոն 900 հազար ձեռքի նռնակ, 38 ինքնաթիռ, 242 տանկ, 214 զրահապատ ավտոմեքենա, 772 շոգեքարշ և ավելի քան 9 հազար 300 ավտոմեքենա։

Այսպիսով, ժողովրդա-ազատագրական շարժման հուժկու ծավալումը, նրա զինված ուժերի հաղթական առաջընթացը կատաստրոֆի առաջ կանգնեցրեց գոմինդանական ռեակցիոն իշխանությանը, ի դերև հանելով ամերիկյան ռեակցիայի հույսերը։ Ինչպես

հայտնի է՝ Չան-Կայ-շին թողել է Նանկինը, իր ծննդավայրը, պրեզիդենտական իրավունքները հանձնելով Լի Ցզուն-ժենին։ Մինչև այժմ դեռ հայտնի չէ Չան-Կայ-շիի հեռացումը․ հանդիսանո՞ւմ է արդյոք պրեզիդենտի պոստից հրաժարում, թե այն գործերից որոշ ժամանակով մի կողմ քաշվելն է միայն նշանակում։ Համենայնդեպս Լի Ցզուն-ժենը, Չան-Կայ-շիի մեկնումից հետո Չինաստանի կոմունիստական պարտիայի հետ հաշտություն կնքելու ակտիվ նախապատրաստություն սկսեց։

Հունվարի կեսերին Չինաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի նախագահ Մաո Ցզե դունը հայտարարություն արեց Չինաստանի ընթացիկ դրության մասին։ Հայտարարության մեջ ասված է. «Ժողովրդա-ազատագրական բանակին մնում է միայն մի քանի հարված հասցնել գոմինդանական մնացած զորքերին և գոմինդանի ամբողջ ռեակցիոն կառավարող ապարատը հողմացրիվ կլինի»։

«Չինաստանի ժողովրդա-ազատագրական բանակը բավականաչափ ուժ և հիմք ունի վերջնականապես ոչնչացնելու գոմինդանի ռեակցիոն կառավարության մնացած բոլոր զինված ուժերը ամենամոտ ապագայում։

Սակայն պատերազմը ամենաարագ կերպով ավարտելու, խսկական խաղաղություն հաստատելու և ժողովրդական մասսաների տառապանքները թեթևացնելու համար, Չինաստանի կոմունիստական պարտիան

զանգվածում է հաշտության բանակցություններ սկսել Նանկինի գոմինդանական ռեակցիոն կառավարության, կամ գոմինդանական ամեն մի այլ տեղական կառավարության, կամ ռազմական բլոկի հետ հետևյալ պայմանների հիման վրա.

1. Պատժել պատերազմի հանցագործներին. 2. Վերացնել սնամեջ կոնստիտուցիան. 3. Վերացնել օրինականության տրադիցիոն ինստիտուտները, որոնք սահմանել է գոմինդանը. 4. Վերակառուցել բոլոր ռեակցիոն բանակները դեմոկրատական սկզբունքներին համապատասխան. 5. Բռնագրավել բյուրոկրատական կապիտալը. 6. Ռեֆորմի ենթարկել ագրարային սիստեմը. 7. Վերացնել դավաճանական պայմանագրերը. 8. Հրավիրել Քաղաքական կոնսուլտատիվ խորհուրդ, առանց ռեակցիոն տարրերի մասնակցության՝ նպատակ ունենալով ստեղծել դեմոկրատական կոալիցիոն կառավարություն, ընդունել ամբողջ իշխանությունը Նանկինի գոմինդանական ռեակցիոն կառավարությունից և նրա տեղական իշխանության օրգաններից։

Այս պայմանների հիման վրա Չինաստանի կոմունիստական պարտիայի հետ բանակցություններ վարելու համար Լի Ցզուն-ժեն նշանակել է կառավարական պատգամավորություն։ Կոմունիստական պարտիան նույնպես նշանակել է իր պատգամավորությունը։

Սակայն լավ գիտենալով պատերազմի հանցագործ

և չին ժողովրդի թշնամի Չան-Կայ-շիի և նրա գլխավորած ռեակցիոն կլիկի, ինչպես և նրանց օտարերկրյա տերերի սուտ պլանները, Չինաստանի կոմունիստական պարտիան չի հավատում նրանց կեղծավոր հավաստիացումներին։ Չինական կոմպարտիայի ներկայացուցիչը հունվարի 28-ին հրապարակեց մի հայտարարություն, որի մեջ ասված է, որ գոմինդանական կառավարության այժմյան գործողությունը հանդիսանում է մի այնպիսի պլան, որով նախատեսվում է հաշտության կեղծավոր բանակցությունների օգտագործել իր զինված ուժերի վերախմբավորումը և պատերազմական պատրաստությունները քողարկելու համար։ Նշելով վերոհիշյալը, Չինաստանի կոմունիստական պարտիան գոմինդանական կառավարությունից կտրականապես պահանջում է իր առաջադրած 8 պայմանների անխախտ կատարումը, ըստ որում առաջին հերթին պատերազմի հանցագործների, այդ թվում Չան-Կայ-շիի անհապաղ ձերբակալումը։



Չինաստանի ժողովրդա-ազատագրական զորքերի խոշոր հաղթությունները և գոմինդանական զորքերի ծանր պարտությունները ունեն իրենց մի շարք պատճառները։ Պատերազմի ընթացքում Չինաստանի ռեակցիոն ուժերն ամբողջովին մերկացան, ցույց տալով իրենց հակաժողովրդական, հակազգային

դեմքը։ Չինական ժողովուրդը բազմաթիվ փաստերի վրա համոզվեց, որ գոմինդանական ղեկավար շրջաններն ամերիկյան իմպերիալիստներին են վաճառում երկրի անկախությունն ու ազատությունը, որ նրանք անընդհատ են բարեկավելու աշխատավորների ծանր դրությունը և որ նրանք մտածում են միայն իրենց անձնական հարստացման մասին։ Չինական ռեակցիոնները դուրս եկան մեկուսացված Չինաստանի ժողովրդական մասսաներից։ Չինաստանում, նրա պատմության ընթացքում առաջին անգամ կազմակերպվեց դեռևս չտեսնված ազգային միասնական ճակատ, որը միացնում է բանվորներին, գյուղացիներին, քաղաքային մանր բուրժուազիային և այլն։

Չինական ժողովրդի ազգային միասնական ճակատում հիմնական դերը խաղում է բանվոր դասակարգը, որը սերտ դաշինքի մեջ է մտել գյուղացիության հետ։ Չինական կոմունիստական պարտիան, որն այժմ իր շարքերում ունի ավելի քան 3 միլիոն անդամ, հանդիսանում է ազգային միացյալ ճակատի ճանաչված առաջնորդը։ Կոմպարտիայի ծրագիրը, որը ցույց է տալիս ժողովրդա-ազատագրական պատերազմի նպատակները և նշում է հիմնական դեմոկրատական ռեֆորմները, այժմ ճանաչված է ամբողջ չին ժողովրդի կողմից։ Այդ ծրագիրը ոչ միայն հայտարարվեց, այլև հետևողականորեն կիրառվում է կյանքում երկրի ազատագրված ամբողջ տերիտորիայում։

Չինաստանի ազատագրված շրջաններում, իշխանության հին օրգանների փոխարեն, դեմոկրատական հիմունքներով ընտրված են իշխանության տեղական ժողովրդական օրգաններ։ Ընտրական իրավունք է տրված բոլոր քաղաքացիներին, առանց սեռի, ազգության և սոցիալական պատկանելության խտրության։ Օգտագործելով իրենց տրված իրավունքները ազատագրված շրջանների աշխատավորներն ստեղծեցին պրոֆմիություններ, գյուղացիական միություններ, կանանց և երիտասարդական միություններ, կոոպերատիվ միավորումներ և հասարակական այլ կազմակերպություններ, որոնք իրենց շարքերում միավորել են մոտ 100 միլիոն մարդ։

Իշխանության դեմոկրատական օրգանները ազատագրված շրջաններում, քաղաքացիական պատերազմի ընթացքում, անցկացրին մի շարք դեմոկրատական ռեֆորմներ։ 1948 թվի գարնանը Մանջուրիայի և Հյուսիսային Չինաստանի ազատագրված ամբողջ տերիտորիայի վրա ավարտվեց հողային ռեֆորմի անցկացումը։ Մամուլի հաղորդագրություններով մոտ 100 միլիոն գյուղացի և նրանց ընտանիքների անդամներ հող ստացան և կամ թե ավելացրին իրենց "հողաբաժինը" ի հաշիվ կալվածատերերից խլված հողերի։ Միլիոնավոր գյուղացիներ ազատագրվեցին կալվածատերերի և վաշխառուների շահագործումից և հարկատվություններից։

Հողի ռեֆորմի անցկացման հետ միաժամանակ

ազգայնացվեց ճապոնական հափշտակիչներին և չինական խոշոր մոնոպոլիստներին պատկանող արդյունաբերությունը։ Շնորհիվ բանվորների աշխատանքային հերոսության ազատագրված շրջանների արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասն այժմ աշխատում է լրիվ թափով։ Ազատագրված շրջաններում 1948 թվին հավաքված լավ բերքը և արդյունաբերության արտադրանքի աճը զգալի չափով բարելավեցին այդ շրջանների աշխատավորության տնտեսական դրությունը։

Բացի հողային ռեֆորմից և արդյունաբերության ազգայնացումից, Չինաստանի ազատագրված շրջանների իշխանության դեմոկրատական օրգանները մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին բանվոր դասակարգի կյանքի պայմանների բարելավման, կանանց դրության բարելավման, ազգային փոքրամասնության ավտոնոմիան ապահովելու, գյուղացիներին՝ իրենց ստացած հողը օգտագործելու համար օգնություն կազմակերպելու, ժողովրդական կրթության զարգացման, առողջապահության համար և այլն։ Դեմոկրատական ռեֆորմները ժողովրդական մասսաներին ավելի սերտորեն համախմբեցին իշխանության դեմոկրատական օրգանների և Չինաստանի կոմունիստական պարտիայի շուրջը։



Մ Ո Ւ Ն Ա Կ Ա Ն
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ
ՈՒԼԱՆ-ԲԱՏՈՐ
Բայկալ լիճ
ԲԼԱԳՈՎԵՇՉԵՆՍԿ
ԽԱԲԱՐՈՎՍԿ
ԽԱՅԼԱՐ
ԲԵՅԱՆՉԺԵՆ
ՑԻՑԻԿԱՐ
ԽԱՐԲԻՆ
ՑԶՅԱՄՈՒՍԻ
ՄՈՒԴԱՆՑԶՅԱՆ
ԳԻՐԻՆ
ՉԱՆՉՈՒՆ
ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ
ՉԱԽԱՐ
ԺԵԽԵ
ԴՈԼՈՆՈՐ
ՉԻՖԻՆ
ՄՈՒԿԴԵՆ
ԱՆԴՈՒՆ
ԴԱՏՈՒՆ
ԲԵՅՊԻՆ
ՏԱՆԳՈՒ
ՏՅԱՆՑԶԻՆ
ՉԻՖՈՒ
ԴԱԼՆԻ
ՓԽԵՆՅԱՆ
ՍԵՈՒԼ
ՊՈՒՍԱՆ
ԴԵՂԻՆ ԾՈՎ
ԿԻՆՍՅԱ
ՏԱՅՅՈՒԱՆ
ԲԱՈԴԻՆ
ՀԵԲԵՅ
ՇԱՆՍԻ
ՇԱՆԴՈՒՆ
ՑԶԻՆԱՆ
ՑԻՆԴԱՈ
ԼԱՆՑԺՈՒ
ՀԱՆՍՈՒ
ՍԻԱՆ
ԽԵՆԱՆ
ԿԱՅՖԻՆ
ԲԵՆԲՈՒ
ՑԶՅԱՆՍՈՒ
ԱՐԵՎԵԼՅԱՆ-
ՉԻՆԱԿԱՆ
ԾՈՎ
ՆԱՆԿԻՆ
ՇԱՆՀԱՅ
ԽԱՆՑԺՈՒ
ՀՈՒԲԵՅ
ԻՉԱՆ
ԱՆՑԻՆ
ՑԶԵՑԶՅԱՆ
ՆԱՆՉԱՆ
ՉԱՆՇԱ
ՀՈՒՆԱՆ
ՀԵՆՅԱՆ
ՖՈՒՑԶՅԱՆ
ՖՈՒՑԺՈՒ
ՏԱՅԲԵՅ
ԱՄՈՅ
Ֆորմոզա կղ.
ՏԱՅՆԱՆ
ՍՎԱՏՈՈՒ
ԿԱՆՏՈՆ
ՀՈՆԿՈՆԳ
ԳՈՒԱՆԴՈՒՆ
ԳՈՒԱՆՍԻ
ՑՈՒՆՆԱՆ
ԿՈՒՆՄԻՆ
ԳՈՒՅՑԶԺՈՒ
ԳՈՒՅԱՆ
ՍԻՉՈՒԱՆ
ՉՈՒՆՑԻՆ
Յանցզի
ԽԱՆՈՅ
ԽԱՅՖՈՆ
ՎՅԵՏՆԱՄ
ՑԶՅՈՒՆՑԺՈՒ
Խայնան
ՀԱՐԱՎԱՅԻՆ-ՉԻՆԱԿԱՆ ԾՈՎ
200 կմ.
Ս Ո Ւ Մ
ՄԻՆՉԵՎ 1948 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ը ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ
1948 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ-1949 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ը ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԸ
ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԹԵՄԱ, ՊԼԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԳԻՏԱՏՈՐՆԵՐԻ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»։

1. ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը կարևորագույն միջոցառում է մեր երկրում պարենամթերքների ու արդյունաբերական հումքի առատություն և պետական անհրաժեշտ ռեզերվներ ստեղծելու համար։

2. Կոլխոզների բրիգադաներում և օղակներում բոլոր գյուղատնտեսական աշխատանքները անհատական ու մանր-խմբային գործավարձի հիման վրա կատարելը կարևորագույն ձեռնարկում է հանրային աշխատանքում յուրաքանչյուր կոլխոզնիկի շահագրգռվածությունը բարձրացնելու, դիմազրկությունը վերացնելու, կարգապահությունն է՛լ ավելի բարձրացնելու գործում։

3. Կոլխոզների աշխատանքի կազմա-

կերպման և վարձատրման նոր կարգը պայքար է կոլխոզնիկների մեջ եղած գափող և անբարեխիղճ տարրերի դեմ։

4. ՍՍՌՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել և ամրացնել հանրային սոցիալիստական սեփականությունը, որպես սովետական կարգերի սրբազան և անձեռնմխելի հիմքը, որպես հայրենիքի հարստության և հզորության աղբյուրը։

5. Ընթացիկ տարվա գարնանացանի ժամանակին, բազմակողմանի նախապատրաստվելը և սեղմ ժամկետում ավարտելը պարտիայի և կառավարության որոշումների կենսագործումն է։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը «Կոլխոզներում աշխատանքի կազմակերպումը բարելավելու, արտադրողականությունը բարձրացնելու և վարձատրությունը կարգավորելու միջոցառումների մասին»։ («Սովետական Հայաստան», 25 հունիսի 1948 թ.)։

2. ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1947 թ. հունիսի 4-ի հրամանագիրը («Ս. Հ.», 5 հունիսի 1947 թ.)։

3. ՍՍՌՄ Կոնստիտուցիայի I և X գլուխ.

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ. — «Քաղաքական ագիտացիայի մասին», Հայպետհրատ, 1948 թ., էջ58։

«Ագիտատորի գրադարան»-ի սերիայով լույս տեսած այս ժողովածուի մեջ զետեղված են 1942—1944 թ. թ. ժամանակաշրջանում Միխայիլ Իվանովիչ Կալինինի մի քանի ելույթները քաղաքական ագիտացիայի մասին։

Բոլշևիկյան պարտիայի և սովետական պետության ականավոր գործիչ Մ. Ի. Կալինինը հանդիսանում էր Լենինի-Ստալինի գաղափարների լավագույն պրոպագանդիստն ու ագիտատորը. նա բոլշևիկյան ճշմարիտ խոսքը տանում էր դեպի մասսաները և նրանց պայքարի հանում այդ գաղափարների կենսագործման համար։

Մ. Ի. Կալինինը, ելնելով իր անձնական պրոպագանդիստական, ագիտացիոն աշխատանքի բազմամյա փորձից, պարտիական աշխատողներին ու ագիտատորներին սովորեցնում էր բոլշևիկյան ագիտացիայի արվեստը։ Հանձնարարվող այս ժողովածուում

ամփոփված են նրա հինգ ելույթները, որոնք սովորեցնում են բոլշևիզմի ճշմարիտ խոսքը տեղ հասցնելու կարողություն, մասսաների գիծը և կազմակերպելու ուժ ու ընդունակություն։

Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է,— սովորեցնում էր Մ. Ի. Կալինինը,— որ ագիտատորը լինի գաղափարական մարդ, խորապես նվիրված կոմունիստական պարտիային, հասկանա այն խնդիրները, որ մեր պարտիան դնում է բանվոր դասակարգի առաջ, ժողովրդի առաջ, որ նա որոշակի ընդհանուր պատրաստականություն ունենա։ Մ. Ի. Կալինինը սովորեցնում էր, թե ինչ պես, ինչ ձևերով ու մեթոդներով պետք [illegible] քաղաքական աշխատանք կատարել մասս[illegible] ների մեջ, կազմակերպել ու առաջնորդ[illegible] մասսաներին։

Ագիտատորը պետք է համեստ լին[illegible] ծամտանա, լինի ճշմարտախոս, [illegible] անկեղծություն ու ազնվություն, մո[illegible] գնած լինի մարդկանց։ Մ. Ի. Կալինի[illegible] շում էր, որ ագիտատորը չպետք է խու[illegible] սուր հարցեր դնելուց, խույս չտա [illegible] ծանելուց, չպետք է կոծկի դրված հարցե[illegible] և նկարագրի դրությունն այնպես, ինչպ[illegible] Ռազմաճակատի ագիտատորներ[illegible]

դակցության ժամանակ Միխայլ [illegible] իր ելույթում նշում էր, որ պետք [illegible] տորի «խոսքը ճեղինակավոր լինի [illegible] լին, կարողանա թափանցել մա[illegible] ր, դաստիարակի ու բորբոքի մասս[illegible] ին», որ նա պետք է «մարդկանց դաստի[illegible] րակի ու սովորեցնի իր սխրագործո[illegible] հաշուրյան անձնական օրինակով, բո[illegible] յան բոցաշունչ խոսքով, հարցերի ճի[illegible] համարձակ դրվածքով, և, որ գլխավ[illegible] մարտական օրինակելի աշխատանքո[illegible]

Մ. Ի. Կալինինը լուրջ նշանակությ[illegible] տալիս ագիտատորի լեզվին, որ «ագիտատո[illegible] րի համար լեզուն ամեն ինչ է»։ Միխայիլ [illegible] վանովիչ Կալինինը սովորեցնում էր հարցեր[illegible] մեջ տեսնել գլխավորը, յուրաքանչյուր էտա[illegible] պում կարողանալ բռնել հիմնական օղակից[illegible]

Մ. Ի. Կալինինի «Քաղաքական ագիտացիայի մասին» այս փոքրիկ ժողովածուն մեծապես կօգնի մեր ագիտատորներին՝ աշխատավորների մեջ իրենց ամենօրյա քաղաքական-մասսայական աշխատանքի ընթացքում։

ՆՈՐ ԳՐՔԵՐ

Ֆ. ԷՆԳԵԼՍ.— «Կոմունիստների Միության պատմության շուրջը», Հայպետհրատ, 1948 թ., տիրաժ՝ 5000, 32 էջ, գինը՝ 50 կոպ.։

Ց. ԶԵԼԻԿՍՈՆ—ԲՈԲՐՈՎՍԿԱՅԱ.— «Մ. Ի. Կալինին», Հայպետհրատ, 1949 թ., տիրաժ՝ 3000, 68 էջ, գինը՝ 2 ռ.։

Ս. ԱՅՎԱԶՅԱՆ.— «Թովչանէֆ»,— Հայպետհրատ, 1948 թ., տիրաժ՝ 3000, 68 էջ, գինը՝ 2 ռ.։

Պատասխանատու խմբագիր՝
Հ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ՎՖ 01023 Պատվեր № 224 Տիրաժ 8.500

Պոլիգրաֆ. և հրատ. վարչ. № 2 տպարան, Երևան

Отдел Пропаганды и агитации ЦК КП(б) Армении

БЛОКНОТ АГИТАТОРА

№ 5 1949 г.